

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ *

ՀՏԴ 338.2

DOI: 10.52063/25792652-2024.4.23-217

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի կառավարման ֆակուլտետի
«Կառավարում» ամբիոնի հայցորդ,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

melkumyannarek16@gmail.com

ORCID: 0009-0001-1788-9286

Սույն հոդվածը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ և կազմակերպական առանցքային դրույթներն ու մեխանիզմները:

Հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել և վերլուծել թվայնացման գործընթացների իրավակարգավորման մեխանիզմներն ու կազմակերպական ձևերը և դրանց ազդեցությունը Հայաստանի պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, հանրային ծառայությունների մատչելիության ապահովման և տնտեսական զարգացման վրա: Այս նպատակին հասնելու համար առաջադրված խնդիրն է ՀՀ պետական կառավարման համակարգում թվայնացման ընթացիկ իրավիճակի, հիմնական միտումներն ուսումնասիրելը՝ հաշվի առնելով հատկապես իրավակազմակերպական հիմքերը: Բացի այդ, հոդվածում իրականացվել է պետական կառավարման համակարգում կիրառվող թվայնացման գործիքների արդյունավետության գնահատում, հնարավոր խնդիրների բացահայտում և դրանց լուծման ուղիների նախանշում:

Խնդիրը համակողմանի հասկանալու համար հոդվածում օգտագործվել են համեմատական և կառուցվածքային վերլուծության մեթոդները՝ ներառյալ իրավական և ծրագրային փաստաթղթերի վերլուծություն, ինչպես նաև իրականացված նախաձեռնությունների գնահատում:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում ակտիվորեն զարգանում են թվայնացման և թվային փոխակերպման գործընթացները, որոնք, հատկապես վերջին տարիներին, մեծ կարևորություն են ձեռք բերել՝ նպաստելով պետական կառավարման համակարգի արդիականացմանը և հասարակության կյանքի որակի բարձրացմանը: Այս գործընթացների ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը ստեղծվել են պետական ծրագրերի, իրավական բարեփոխումների և միջազգային համագործակցության արդյունքում: Հատկանշական է, որ ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարական ծրագրերն ու նախաձեռնությունները նախանշել են պետական կառավարման համակարգի թվայնացման հիմնական ուղղությունները և բարելավվել ոլորտի իրավական կարգավորումը:

* Հոդվածը ներկայացվել է 03.12.2024թ., գրախոսվել՝ 18.12.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շարունակել թիրախային գործողություններ՝ ուղղված հասարակության թվային գրագիտության բարձրացմանը, միջգերատեսչական համագործակցության ամրապնդմանը, հանրային ակտիվ ներգրավվածության ապահովմանը և կիբեռանվտանգության համակարգի զարգացմանը:

Հիմնաբառեր՝ թվայնացում, թվային փոխակերպում, պետական կառավարում, էլեկտրոնային կառավարում, թվային հմտություններ, կիբեռանվտանգություն, տեղեկատվական համակարգեր, ինստիտուցիոնալ զարգացում, միջազգային համագործակցություն, հանրային ծառայություններ:

Նախաբան

Ժամանակակից աշխարհում թվայնացման գործընթացների ընդգրկման շրջանակն ու ազդեցությունը թերագնահատել չի կարելի: Թվայնացման և թվային փոխակերպման գործընթացները ներթափանցել են տնտեսության տարբեր ոլորտներ ու պետական կառավարման համակարգ՝ «կերպարանափոխելով» ընթացիկ գործընթացները: Թվայնացման ինստիտուցիոնալ մեխանիզմների ու գործիքակազմերի հիմնական առանցքը պետք է լինի պետական կառավարման արդյունավետության բարձրացումն ու հասարակության կյանքի որակի բարելավումը: Ժամանակակից թվային գործիքների կիրառմամբ պետության գործունեությունը և փոխառնչությունները հասարակության հետ շահավետ համագործակցության որակապես նոր մակարդակի նշաձող են սահմանել: Մյուս կողմից, իհարկե, ժամանակակից թվային տեխնոլոգիաների տարածմանը զուգահեռ, հասարակության պահանջները պետական համակարգի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ գնալով աճում են, դա օրինաչափ է: Այս համատեքստում, թվայնացման գործընթացների կարգավորման անհրաժեշտությունն ու իրավական գործունակ էկոհամակարգի առկայությունն ավելի քան օրակարգային է դարձել նաև Հայաստանում: Ի վերջո, ճկուն և թիրախային իրավակարգավորման մեխանիզմների ու օրենսդրական դաշտի առկայությունն առանցքային «լոկոմոտիվ» է, որը կարող է նպաստել Հայաստանում պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման միտումների արագացմանն ու գործընթացների բարելավմանը:

Գրականության ակնարկ

Պետական կառավարման համակարգում թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայության անհրաժեշտությունն ու կարևորությունը մասնագիտական շրջանակների կողմից ներկայացվել է մի շարք առանցքային դիտանկյուններով: Թվայնացման գործընթացներում իրավական և կազմակերպական հիմքերը կարևոր են՝ ապահովելու թվային փոխակերպման համար անհրաժեշտ կարգավորող շրջանակը, միաժամանակ պաշտպանելով քաղաքացիների իրավունքները (Nyman-Metcalf 5): Հատկանշական է, որ մի շարք հեղինակների կողմից ներկայացվել է նաև պետական կառավարման համակարգում թվայնացման ինստիտուցիոնալ գործիքակազմերի ներդրման բարդությունն ու արդյունավետության անորոշությունը (Saarenpää 377–384): Ժամակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման արագ տարածման պայմաններում համապատասխան իրավակարգավորման մեխանիզմների և կազմակերպական ձևերի մշակումն ու իրականացումը դարձել է էլեկտրոնային կառավարման և պետական ծառայությունների թվային փոխակերպման արդյունավետության մակարդակի բարձրացման հիմնական գործոնը (Sarantis 179–

187): Այս համատեքստում, անհրաժեշտ են նաև տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներին վերաբերող օրենքներ, որոնք կկարգավորեն տեխնոլոգիաների հասանելիությունն ու կիրառումը պետական համակարգում՝ նպաստելով հասարակության հետ էլեկտրոնային հաղորդակցության ուղիների կատարելագործմանն ու արդիականացմանը (Albrecht 198–209):

Պետական կառավարման ոլորտում թվային փոխակերպումները ներկայումս նպատակ ունեն անցում կատարելու «Էլեկտրոնային կառավարությունից» դեպի «թվային կառավարություն»: «Էլեկտրոնային կառավարության» դեպքում տեխնոլոգիաները կիրառվում են պետական կառավարման մարմինների գործողությունների ավտոմատացման և աջակցման համար: Ի տարբերություն դրա, «թվային կառավարությունը» հիմնվում է տեխնոլոգիաների կիրառման վրա՝ պետական կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով (OECD 6): Ստացվում է, որ պետությանը վերապահվում է միասնական թվային էկոհամակարգի միջոցով քաղաքացիների ու կազմակերպությունների փոխգործակցությունն ապահովողի ու կազմակերպչի դեր (Խաչատրյան 269): Ընդհանուր առմամբ, այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծելու ամբողջական ֆունկցիոնալ համակարգ, որը միավորում է պետական կառավարման մարմինները, գործարար հատվածը, ֆիզիկական և իրավաբանական անձանց: «Թվային կառավարությունը» գործում է որպես միացնող օղակ՝ ապահովելով այդ դերակատարների միջև արդյունավետ փոխգործակցություն:

Թվայնացման միտումներն առանցքային նշանակություն ունեն ինչպես Հայաստանի տնտեսության, այնպես էլ թվային հասարակության ձևավորման համատեքստում: Այսպես՝ «Թվային հասարակության տեսական հիմքերը և զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում» հոդվածի հեղինակը փաստում է, որ հայ հասարակությունը, գլոբալ միտումներին համահունչ, թևակոխում է զարգացման նոր՝ թվային փուլ: Թվայնացման օրակարգի բարեհաջող իրականացման համար առանցքային են տվյալների ազգային պահոցի ստեղծումը և դրա անխափան շահագործումը: Գեներացվող մեծ տվյալների՝ իրական ժամանակում մշակումը և վերլուծությունը չափելի, հետևաբար նաև՝ կանխատեսելի ու կառավարելի կդարձնեն պետության սոցիալ-տնտեսական դինամիկ զարգացումը (Հարությունյան 114): Հայաստանում տեղեկատվական հասարակության կայացման հիմքում ընկած տեղեկատվական անվտանգության, հասարակության մեդիագիտելիքների ու հմտությունների զարգացման աշխատանքները կյանքի են կոչվում մեծամասամբ միջազգային կազմակերպությունների ծրագրային փաթեթների և քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունների գործունեության արդյունքում (Մելքոնյան 114): Մի շարք հեղինակներ անդրադարձել են նաև Հայաստանի տնտեսության և թվայնացման մակարդակի փոխառնչություններին: Մասնավորապես, ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների միտումների վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ ՀՆԱ-ն և նրա կառուցվածքային բաղադրիչները դրսևորել են աճող տրենդ, ինչպես նաև աճել է փողի զանգվածը, թվայնացման մակարդակը: Տնտեսության թվայնացումը տանում է տնտեսական աճի. մասնավորապես 1%-ով թվայնացումը բերում է 1.95% տնտեսական աճի: Ըստ հեղինակի կողմից իրականացված կանխատեսման՝ ստացվում է, որ միայն թվայնացման զարգացման և խորացման հաշվին ՀՀ-ն կունենա 4 տոկոս տնտեսական աճ: Ստացվում է՝ գրեթե կրկնապատիկ ազդեցության գործոն է տնտեսության թվայնացման մակարդակի աճը ՀՀ տնտեսական աճի ապահովման համար: Անհրաժեշտություն է առաջանում մակրոտնտեսական քաղաքականություն մոդելավորելիս ընդգրկելու նման ազդեցիկ ցուցանիշ՝ որպես ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ) բնութագրող ցուցիչ (Մաթևոսյան 195): Հայաստանում տնտեսությունն ունի թվայնացման զարգացման ներուժ, սակայն առկա են նաև մի շարք խոչընդոտներ, այդ

թվում՝ մարդկային կապիտալի պակաս, պետական քաղաքականության համարժեքության բացակայությունը և թվային ենթակառուցվածքների թերի զարգացում (Մինասյան և այլոք 180):

Այսպիսով՝ Հայաստանում պետական կառավարման և տնտեսության թվայնացման գործընթացներն առաջընթացի հնարավորություններ են ստեղծում՝ նպաստելով գործառնական արդյունավետության, տնտեսական աճի և սոցիալ-տնտեսական դինամիկ զարգացման բարձրացմանը: Այնուամենայնիվ, այս գործընթացը բախվում է իրավական և կազմակերպական դաշտի թերի կարգավորման, մարդկային կապիտալի պակասի և ենթակառուցվածքների զարգացման անհավասարության մարտահրավերներին, որոնք պահանջում են համապարփակ մոտեցում և ռազմավարական քաղաքականության հստակություն: Միաժամանակ, թվայնացման մակարդակի աճը կարող է դառնալ տնտեսական աճի հիմնական խթանը, սա ընդգծում է դրա ներառման անհրաժեշտությունը մակրոտնտեսական քաղաքականության ձևավորման մեջ:

Վերլուծություն

Հայաստանում, թվայնացման և թվային փոխակերպման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը ներկայումս կարելի է բնորոշել որպես էլեկտրոնային կառավարման գործիքների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր: Այդուհանդերձ, իրականացված բարեփոխումները զերծ չեն եղել մարտահրավերներից և ձախողումներից, որոնք էական ազդեցություն են ունեցել պետական կառավարման համակարգի արդյունավետության վրա: 1990-ականների վերջից պետական կառավարման ոլորտում սկսվել են էլեկտրոնային գործիքների կիրառմանն ուղղված ակտիվ բարեփոխումները: Այդ փոփոխությունները միտված էին կառավարման արդիականացմանն ու տեխնիկական վերագինմանը՝ համապատասխանեցնելով այն նոր տնտեսական և հասարակական հարաբերություններին: Սակայն այս գործընթացում ի հայտ եկած խնդիրներն ու ռիսկերը, ինչպիսիք են իրավական դաշտի անլիարժեքությունը, գործնական ներդրման սահմանափակումները և մասնագիտական ներուժի պակասը, բավական թուլացրել են որոշ ծրագրերի արդյունավետությունը: 1999 թվականին ՀՀ վարչապետի որոշումով ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու հաստատվել կանոնադրությունը (1999 թվականի հոկտեմբերի 7-ի N 624 որոշում): Հանձնաժողովի կողմից մշակվել է պետական կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգը՝ երեք հիմնական ուղղություններով (ՀՀ վարչապետի 1999 թվականի նոյեմբերի 15-ի N 692 որոշում):

1. Կառուցվածքային և գործառնության բարեփոխումներ հանրային կառավարման համակարգում, որոնց նպատակն էր բարձրացնել պետական մարմինների գործունեության արդյունավետությունը՝ ապահովելով թափանցիկություն և պատասխանատվություն: Այնուամենայնիվ, փաստացի իրագործման ընթացքում բազմաթիվ հիմնախնդիրներ մնացին չլուծված, ինչպիսիք են պետական մարմինների օպտիմալացման հետ կապված անարդյունավետ քաղաքականությունները:

2. Զաղաքացիական ծառայության ստեղծում, որը միտված է ձևավորելու պրոֆեսիոնալ և անաչառ քաղաքացիական ծառայություն՝ ունակ արդյունավետորեն իրականացնելու պետական քաղաքականությունները և ծառայելու հանրությանը: Սակայն այս ոլորտում ևս արձանագրվել են լրջագույն մարտահրավերներ, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական պատրաստվածության և շարունակական ուսուցման պակասը:

3. Բարեփոխումներ հանրային ֆինանսական մենեջմենթի համակարգում, որի նպատակն է պետական ֆինանսների կառավարման արդյունավետության

բարձրացումը, բյուջետային գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը:

ՀՀ Կառավարությունը 2000-ականներից սկսած ակտիվացրել է էլեկտրոնային կառավարման ոլորտի ծրագրերը, որոնց նպատակն է արդիականացնել հանրային կառավարման համակարգը և բարձրացնել պետական ծառայությունների արդյունավետությունը: Պետական բյուջեի միջոցներով և միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպական միության, Միավորված ազգերի կազմակերպության և Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ ՀՀ Կառավարությունը կարողացել է իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք հիմք են հանդիսացել կառավարման համակարգի թվային փոխակերպման համար (Խաչատրյան 77-78): Զաղաքացիների, ձեռնարկությունների և կառավարության միջև կապի ապահովման համար ստեղծվել են բազմաթիվ բարդ և ինտեգրված համակարգեր: Սակայն պետք է ընդգծել, որ այդ համակարգերի ներդրման գործընթացում առկա էին մի շարք խնդիրներ, որոնցից ամենաընգծվածն այն է, որ մի շարք ծրագրեր պիլոտային փուլից հետո չշարունակվեցին: Դրա պատճառն այն էր, որ թվայնացման ծրագրերի ներդրման փուլում բացահայտվեցին խնդիրներ՝ կապված ինչպես տվյալների կառավարման արդյունավետության, այնպես էլ տարբեր համակարգերի միջև ինտեգրման բարդությունների հետ:

2008 թվականից պետական կառավարման մարմիններում փուլային տարբերակով սկսվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը, որի հիմնական նպատակներն են՝ պետական մարմիններում փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարումը, փաստաթղթերի և կից նյութերի էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանումը, փաստաթղթերի հետ աշխատելու միասնական ձևի ապահովումը, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի ապահովումը և փաստաթղթերի կորստի բացառումը (Խաչատրյան 77-78):

Հատկանշական է այն, որ չնայած «Mulberry» համակարգի կիրառման բավական երկար ժամանակահատվածին, այս համակարգը չի ապահովել պետական կառույցներում հորիզոնական և ուղղահայաց լիարժեք ինտեգրում: Իսկ մյուս կողմից, «Mulberry» համակարգի ամբողջական գործարկման խնդիրները շարունակում են արդիական մնալ հատկապես Հայաստանի մարզերում: Ընդ որում, միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս խնդիրը կարգավորելու մեկ ընդհանրական մոտեցում կա՝ ՀՀ ամբողջ տարածքում պետական և տարածքային կառավարման համակարգում ներգրավված մասնագետների շարունակական և մասշտաբային վերապատրաստումների իրականացումը, որն, ըստ էության, մինչ այս պահը չի իրականացվել: Այս համատեքստում առանցքային է առնվազն այս փուլում վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագրերին նոր թափ հաղորդելը: Միևնույն ժամանակ, կարևոր է ընդգծել, որ պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման հաջողությունը կախված է ոչ միայն տեխնիկական լուծումներից, այլ նաև կառավարման մշակույթի փոփոխությունից: Այն պահանջում է պետական կառավարման ոլորտի դերակատարների պատասխանատվության բարձրացում և նոր մոտեցումների ընդունում: Հետևաբար՝ ՀՀ-ում նման ծրագրերի շարունակականությունն ու խորքային ներդրումը պետք է ուղեկցվեն համապարփակ վերլուծությամբ, գործնական խոչընդոտների հաղթահարմամբ և միջազգային լավագույն փորձի տեղայնացմամբ:

2010 թ. ՀՀ Կառավարությունը ներդրել է www.e-gov.am էլեկտրոնային կառավարման հարթակը, որը կենտրոնացրել է ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների շտեմարանները և հարմարավետ միջավայր ստեղծել դրանց օգտագործման համար (ՀՀ Կառավարության 2014 թ. ապրիլի 10-ի նիստի N 14 արձանագրային որոշում): Ավելի քան 20 առցանց ծառայություններ են ներկայացված www.e-gov.am հարթակում, որի

Նպատակն է մեկտեղել ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների հիմնապաշարները և հարմարավետ միջավայր ստեղծել դրանց օգտագործման համար¹: www.e-gov.am հարթակը նախատեսված է պետական կառավարման մարմինների, քաղաքացիների և բիզնեսների միջև էլեկտրոնային հաղորդակցության և ծառայությունների մատուցման համար: Այս հարթակում ներառված է անշարժ գույքի էլեկտրոնային համակարգը², որն ապահովում է անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն և առցանց գործարքների իրականացում: Գործում է նաև պետական վճարումների համակարգը³, որը թույլ է տալիս կատարել պետական վճարումներ առցանց եղանակով, դա խնայում է ժամանակ և նվազեցնում է վարչարարական բեռը: Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման համակարգը⁴ նպաստում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի պարզեցմանը և արագացմանը: Հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգն ապահովում է հարկային հաշվետվությունների առցանց ներկայացումը, որը բարձրացնում է գործընթացի արդյունավետությունը⁵: էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը հնարավորություն է տալիս քաղաքացիներին և կազմակերպություններին ուղղելու հարցումներ պետական մարմիններին և ստանալու պատասխաններ առցանց⁶: Բացի այդ, www.e-gov.am հարթակում առկա են նաև Շինարարական թույլտվությունների գործընթացների համակարգը⁷ ու իցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանը⁸: 2020 թվականի ապրիլի 1-ից հասանելի դարձավ մարդու իրավունքների ազգային ռազմավարության e-rights.am հարթակը⁹, որի նպատակն է ապահովել կառավարության գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, ինչպես նաև խթանել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում:

Պետք է ընդգծել, որ այս համակարգերի ներդրումը ունի ակնհայտ դրական կողմեր (օրինակ՝ վարչարարական բեռի և պետական մարմինների հետ ուղղակի շփման կրճատում, թափանցիկության բարձրացում և այլն), որն, իհարկե, դրական ազդակներ կհաղորդի հանրային ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման տեսանկյունից, ինչպես նաև կարող է խթանել Հայաստանի պետական կառավարման համակարգի արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, հատկանշական են նաև խնդիրներն ու բացթողումները: Օրինակ՝

¹ ՀՀ էլեկտրոնային կառավարում <https://www.e-gov.am/> (մուտք՝ 28.11.2024 թ.)

² ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ՝ <https://www.e-cadastre.am/> (մուտք՝ 28.11.2024 թ.)

³ ՀՀ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի պաշտոնական կայք՝ <https://www.e-payments.am/hy/> (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁴ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի պաշտոնական կայք՝ www.e-register.am (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁵ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ՝ <https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf> (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁶ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ՝ <https://e-request.am/hy> (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁷ Քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակ՝ www.e-permits.am (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁸ Լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյան՝ www.e-license.am (մուտք՝ 28.11.2024 թ.)

⁹ ՀՀ արդարադատության նախարարության մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ՝ <http://e-rights.am/> (մուտք՝ 28.11.2024 թ.)

տեխնիկական և իրավական կարգավորումների թերութունները դեռևս սահմանափակում են բարձրորակ և ամբողջական ինտեգրումը պետական մարմինների միջև: Բացի այդ, հանրության մի հատվածի համար շարունակում է խնդրահարույց մնալ թվային հարթակներից օգտվելու հմտությունների և ենթակառուցվածքների (ինտերնետ հասանելիության, սարքերի վճարունակության) ոչ բավարար մակարդակը: Ի վերջո, ՀՀ պետական կառավարման համակարգում կառավարման մշակույթում և հանրային ծառայողների մասնագիտական վերապատրաստման համակարգում դեռևս լիարժեքորեն չեն ներմուծվել էլեկտրոնային կառավարման ու թվային փոխակերպման տրամաբանությունը խթանող մոտեցումները: Ստացվում է, որ e-gov.am հարթակը պետք է դիտարկել որպես ամուր հիմք թվային փոխակերպումների ամբողջական իրացման համար: Սակայն, միևնույն ժամանակ, այն պահանջում է շարունակական զարգացում և բարելավում, մասնավորապես՝ տվյալների կառավարման, տեղեկատվական անվտանգության և տարբեր հարթակների միջև փոխգործառնության մասով:

Այսպիսով 2010-ից ի վեր e-gov.am հարթակը և դրա շուրջ ստեղծված համակարգերը նպաստել են հանրային կառավարման թվային փոխակերպման զարգացմանը, սակայն անհրաժեշտ են հետագա քայլեր ավելի ամբողջական, բազմոլորտ և երկարաժամկետ հեռանկարի ապահովման ուղղությամբ: Հետագա զարգացման համար առաջարկվում է մշակել համակարգային մոտեցում, որը կներառի միջազգային առաջատար փորձի ընտրանին, պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության Նոր մոդելներ, ինչպես նաև հայաստանյան իրականությունը տեղայնացված իրավակարգավորումներ:

Հայաստանի պետական կառավարման համակարգում թվայնացման հիմքերի կարևորությունը

Ընդհանուր առմամբ, Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և զարգացումը կարևոր նշանակություն ունեն պետական կառավարման արդիականացման, արդյունավետության բարձրացման և հանրային ծառայությունների մատչելիության համար: Կառավարության կողմից իրականացված ծրագրերը հիմք են ստեղծում Նորարարական տեխնոլոգիաների կիրառման և թվային տնտեսության զարգացման համար: Պետք է նշել, որ ծրագրերի իրականացման ընթացքում արձանագրվել են նաև դժվարություններ, որոնք վերաբերում են թե՛ օրենսդրական, թե՛ տեխնիկական, թե՛ կազմակերպական խնդիրներին: Մասնավորապես, պետական գերատեսչությունների տարբեր մարմինների միջև տվյալների փոխանակման անարդյունավետ համակարգերը, գերատեսչությունների իրավասությունների ոչ հստակ սահմանազատումը, ինչպես նաև մասնագիտական ներուժի որոշակի պակասը պայմանավորել են, որ թվային փոխակերպումն ընթանա ոչ լիարժեք արդյունավետությամբ: Կարևոր է արձանագրել, որ թվային փոխակերպման գործընթացներն անցնում կազմակերպելու և կազմակերպական ձևերի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, հասարակության թվային գրագիտության բարձրացում, որը կարող է կյանքի կոչվել կրթական և իրազեկման գործունակ և թիրախային ծրագրերի իրականացմամբ: Հասարակության թվային գրագիտության բարձրացման համար առաջարկվում է մշակել կրթական և իրազեկման թիրախային ծրագրեր, որոնք կլինեն շարունակական և հենված միջազգային առաջավոր փորձի վրա: Մի շարք երկրներում (Էստոնիա, Սինգապուր և այլն) լայնորեն կիրառվում են պետական-մասնավոր համագործակցության մոդելներ, որոնք թույլ են տալիս արագացնել էլեկտրոնային կառավարման լուծումների տարածումն ու հասանելիությունը հանրության լայն շերտերի համար:

Չնայած այն հանգամանքին, որ Էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացման գործընթացը Հայաստանում ընթանում է բավականին արագ, հասարակության շրջանում Էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը դեռևս համընթաց չէ: Հատկանշական է, որ կառավարական ծրագրերը, անգամ լավագույն տեխնոլոգիական լուծումներով, չեն կարող լիարժեք արդյունք տալ առանց հանրության ակտիվ ներգրավման: Սա ընդգծում է թիրախային գործողությունների անհրաժեշտությունը քաղաքացիների թվային գրագիտության բարձրացման և Էլեկտրոնային ծառայությունների տարածման համար: Բարձր թվային գրագիտություն ունեցող երկրներում (օրինակ՝ Դանիա, Ֆինլանդիա) Էլեկտրոնային ծառայությունների տարածումը կարող է արմատապես բարելավել պետական կառավարման արդյունավետությունը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնել հանրային ծառայությունների մատչելիությունը:

Տեխնոլոգիական փոխգործելիության տեսանկյունից պետական բոլոր գործառնությունները գտնվում են նույն մակարդակում՝ Էլեկտրոնային կառավարման և գործունակության առումով: Սակայն, իրական պատկերը ցույց է տալիս, որ բազմաթիվ հարթակներ և համակարգեր չեն տրամադրում տվյալների փոխադարձ հասանելիություն բովանդակության և ձևաչափի համընդհանուր չափանիշների բացակայության պատճառով: Էլեկտրոնային կառավարման լիարժեք արդյունավետության և հետագա զարգացման համար անհրաժեշտ է մշակել գործառնական (back-office) փոխգործելիություն և ապահովել ընդհանուր չափանիշներ բոլոր պետական ծառայությունների համար: Սա հնարավորություն կտա միասնականացնել պետական մարմինների աշխատանքը, բարձրացնել տեղեկատվության փոխանակման արդյունավետությունը և նվազեցնել վարչարարական բեռը:

Հայաստանում պետական կառավարման համակարգի թվայնացման մասով, իհարկե, քայլեր ու նախաձեռնություններ իրականացվել են, որոնք անտեսել չի կարելի: Բայց, միևնույն է, թիրախային ջանքեր են անհրաժեշտ, որպեսզի բոլոր գերատեսչությունները հավասարաչափ ձևով զարգացնեն իրենց Էլեկտրոնային գործիքները և ապահովեն տվյալների շարունակական և անվտանգ փոխանակումը: Այս համակարգային մոտեցման պարագայում կարևոր են դառնում իրավական և կազմակերպական ոլորտի շարունակական բարեփոխումները, տեղեկացվածության և թվային հմտությունների ավելացմանը միտված կրթական նախաձեռնությունները, գերատեսչությունների միջև տեխնոլոգիական փոխգործելիության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Միայն այս պայմաններում հնարավոր կլինի հասնել համակարգի ամբողջական արդյունավետության և ամրապնդել Հայաստանի դիրքերը համաշխարհային թվային տնտեսությունում:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացմանն ուղղված քայլերը Հայաստանում կարևոր նշանակություն ունեն պետական կառավարման արդյունավետության բարձրացման և քաղաքացիների համար ծառայությունների մատչելիության ապահովման գործում: Այնուամենայնիվ, հետագա զարգացման համար անհրաժեշտ է կենտրոնական գործառնական փոխգործելիության վրա, մշակել ընդհանուր չափանիշներ և ակտիվացնել քաղաքացիների ներգրավվածությունը Էլեկտրոնային ծառայությունների օգտագործման գործում: Սա կնպաստի ոչ միայն պետական ծառայությունների որակի բարձրացմանը, այլ նաև երկրի թվային տնտեսության զարգացմանը և հանրային կառավարման ոլորտում նորարարությունների ներդրմանը:

Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման ոլորտի թվային փոխակերպման գործընթացում կարևոր քայլեր են իրականացվել օրենսդրական և կարգավորող դաշտի ստեղծման ուղղությամբ, որոնք կարգավորում են տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, փոխգործելիությունը և արդյունավետությունը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը ընդունել է մի

շարք որոշումներ, որոնք սահմանում են պետական տեղեկատվական համակարգերի ստեղծման և գործարկման հիմնական պահանջները:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ (ՀՀ Կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N1093-Ն «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» որոշում): Սահմանվել են պետական տեղեկատվական համակարգի ստեղծման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները: Որոշումը նախատեսում է նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից այդ համակարգերին միանալու համար անհրաժեշտ տեխնիկական պահանջների հետ կապված հարաբերությունների կարգավորումը: Այս պահանջները կարևոր են համակարգերի արդյունավետ և անվտանգ փոխգործելիության ապահովման համար, որը նպաստում է պետական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը: Բացի այդ, նույն որոշմամբ Կառավարության փոխգործելիության հարթակի տեխնիկական սպասարկման և համակարգման (ներառյալ համապատասխան ենթառեգիստրների վարումը) օպերատորի գործառույթները վերապահվել են «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին¹: «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հիմնական պատասխանատուն է պետական տեղեկատվական համակարգերի փոխգործելիության ապահովման և տեխնիկական սպասարկման համար: Այսպիսով՝ ապահովվում է միասնական մոտեցում և մասնագիտական կառավարում տեղեկատվական համակարգերի ոլորտում:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1849-Ն որոշմամբ (ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N1849-Ն «Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում) կարգավորվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այդ մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում այլ անձանց կողմից էլեկտրոնային եղանակով պահպանվող և մշակվող անձնական տվյալների էլեկտրոնային փոխանցումը և տվյալների բազաների փոխկապակցումը: Որոշումը նախատեսում է, որ այդ տվյալների փոխանակումը կարող է իրականացվել ոչ միայն պետական մարմինների միջև, այլ նաև ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց և ներդրումային ֆոնդերին: Սա կարևոր քայլ է տվյալների կառավարման և փոխանակման ոլորտում, որը նպաստում է տեղեկատվության հասանելիության բարելավմանը և պետական ծառայությունների որակի բարձրացմանը: Այս որոշումը նաև ընդգծում է անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը տվյալների փոխանակման գործընթացներում: Տվյալների բազաների փոխկապակցումը պետք է իրականացվի համապատասխան իրավական և տեխնիկական ստանդարտներին համապատասխան՝ ապահովելով տվյալների անվտանգության և գաղտնիության պահպանումը:

Վերոնշյալ երկու որոշումներն առանցքային դեր են խաղում ՀՀ թվային կառավարման համակարգի ձևավորման և զարգացման գործում: Դրանք ապահովում են տեղեկատվական համակարգերի ստեղծման, փոխգործելիության և տվյալների փոխանակման իրավական և տեխնիկական հիմքերը: Դրանք ստեղծում են

¹ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի պաշտոնական կայքը՝ <https://www.ekeng.am/hy/>

իրավական և տեխնիկական պայմաններ, որոնք նպաստում են պետական կառավարման համակարգի արդիականացմանը, ծառայությունների մատչելիության և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև տվյալների անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության ապահովմանը: Այս քայլերը համահունչ են միջազգային լավագույն փորձին և ցույց են տալիս Հայաստանի Հանրապետության հանձնառությունը դեպի թվային կառավարման զարգացում և նորարարական տեխնոլոգիաների կիրառում պետական կառավարման ոլորտում:

Սակայն հարկ է նշել, որ նշված իրավական ակտերը, թեև սահմանում են ընդհանուր ուղենշային ստանդարտներ, չունեն բավարար ճկունություն և արդյունավետ մեխանիզմներ՝ դրանց գործնական կիրառման վերահսկողության համար: Սա թույլ է տալիս որոշ գերատեսչությունների մասնակիորեն կիրառել ընդունված պահանջները, դրա հետևանքով էլեկտրոնային կառավարման համակարգերի լիարժեք և անվտանգ փոխգործելիությունը հաճախ չի իրականանում ամբողջ ծավալով: Հայաստանում պետական մարմինների միջև փոխգործելիության ու անվտանգային չափանիշների նկատմամբ միասնական տեխնիկական պահանջների ներդրումը, անշուշտ, կարևոր առաջընթաց է, սակայն անհրաժեշտ է մշակել նաև շարունակական գնահատման և թողունակության թեստավորման մեխանիզմներ, ինչպես նաև ներդնել պատասխանատվության հստակ համակարգ, որպեսզի գերատեսչությունները խստորեն պահպանեն սահմանված պահանջները և ժամանակին թարմացնեն իրենց տեխնիկական ռեսուրսները:

Ընդհանուր առմամբ, նման իրավական կարգավորումների վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատելու, թե ինչպես են միասնական անվտանգության և փոխգործելիության ստանդարտները իրականում ազդում պետական կառավարման արդյունավետության, հանրային վստահության մակարդակի և տնտեսության թվայնացման վրա: Այսպիսով, փորձը ցույց է տալիս, որ միայն իրավական ակտերը բավարար չեն, եթե դրանք չեն համադրվում վերահսկողական ներուժի, մասնագիտական շարունակական վերապատրաստման և սպասարկող տեխնոլոգիական ենթակառուցվածքների հետ:

Այս կարգավորումներում բավական թույլ են նաև տվյալների փոխանակման գործընթացների մշտադիտարկումն ու վերահսկողությունն ապահովող մեխանիզմների առկայությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է մշակել իրավական և ինստիտուցիոնալ հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեն անձնական տվյալների մշակման և պահպանման ամբողջ ցիկլի անվտանգությունը, այդ թվում՝ վերահսկողության միասնական չափանիշների ներդրումը: Սա թույլ կտա սահմանել միասնական տեխնիկական և կազմակերպչական մոտեցումներ, որոնք էլ կնպաստի փոխգործելիության որակական մակարդակի բարձրացմանը:

Պետական և մասնավոր հատվածի միջև տվյալների փոխանակման հնարավորությունը ստեղծում է նախադրյալներ նորարարական ծառայություններ և թվային էկոհամակարգեր զարգացնելու համար, որտեղ տվյալների համակցումը կարող է հանգեցնել ինչպես վարչարարական բեռի նվազման, այնպես էլ տնտեսական ակտիվության խթանման (օրինակ, ֆինանսաբանկային ոլորտում KYC («Ճանաչիր քո հաճախորդին») գործընթացների պարզեցումը, ապահովագրության և ֆինանսական տեխնոլոգիաների ներդրումը և այլն): Իհարկե, այս ամենը ենթադրում է, որ անձնական տվյալների պաշտպանությունը կիրականացվի միջազգային լավագույն փորձին համապատասխան, և քաղաքացիների վստահությունը նման համակարգերի նկատմամբ կապահովվի թափանցիկ և հասանելի տեղեկատվության միջոցով: Ի վերջո, ինչպես արդեն նշվեց, իրավական ակտերի ընդունումը միայն առաջին քայլն է. շատ ավելի բարդ է ապահովել դրանց հաջող կիրառումը, որը պահանջում է պետական մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության սերտ համագործակցություն: Առանց նման համակարգային մոտեցման նույնիսկ

ամենալավ մշակված կարգավորումները կարող են մնալ թղթի վրա և չհանգեցնել սպասվող արդյունքներին:

2017 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ ստեղծվել է «Թվային Հայաստան» հիմնադրամը (ՀՀ Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 926-Ն ««Թվային Հայաստան» հիմնադրամ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում), որով հաստատվել են 16 նպատակներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն աջակցություն ցուցաբերելը՝ Հայաստանի Հանրապետության թվային օրակարգի և դրա հետ առնչվող վարչարարության խնդիրների լուծումներ ներառող միասնական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացի, ինչպես նաև նշված ոլորտների աշխատանքային ռեսուրսների, գործառնությունների պլանավորման և բյուջետավորման հարցերում: ՀՀ պետական կառավարման համակարգում այս պահին առկա են ինչպես թվայնացման, այնպես էլ էլեկտրոնային կառավարման մի շարք կազմակերպական ձևեր:

2022 թվականի հունվարի 21-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի թիվ 81-Ա որոշմամբ ստեղծվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդը (ՀՀ վարչապետի, 2022 թվականի հունվարի 21-ի N 81-Ա «Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» որոշում), որի նպատակն է համակարգել և ուղղորդել ՀՀ թվային վերափոխման, թվային (էլեկտրոնային) հասարակության և թվային տնտեսության ձևավորման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները և ծրագրերը: Բացի այդ, խորհուրդը պատասխանատու է ոլորտում միջազգային գործընկերների հետ համագործակցության և մասնավոր հատվածի հետ երկխոսության համակարգման համար: Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի ստեղծումը կարևոր ինստիտուցիոնալ քայլ է Հայաստանի թվային զարգացման ռազմավարության իրականացման գործընթացում: Որոշման ընդունմամբ նախատեսվում է ձևավորել գործունակ համագործակցային մեխանիզմներ տարբեր գերատեսչությունների միջև, սահմանել ընդհանուր առաջնահերթություններ և կանխարգելել ծրագրերի անհամաձայնեցված իրականացումը: Այս խորհրդի ձևավորումը կարող է դիտարկվել որպես պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման ուղղությամբ արդյունավետ քաղաքականությունների մշակման և իրականացման խթանիչ: Չնայած դրան՝ հաջողությունը զգալիորեն կախված է այն հանգամանքից, թե ինչպես խորհուրդը կիրականացնի վերահսկողական և կապող դերը գերատեսչությունների, մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների միջև: Խորհուրդը հնարավորություն է տալիս համակարգելու պետական և մասնավոր հատվածների ջանքերը՝ ապահովելով փոխադարձ համագործակցություն և սիներգիա թվային նախագծերի իրականացման մեջ: Այնուհանդերձ, անհրաժեշտ է վեր հանել ամենակարևոր կազմակերպչական մարտահրավերները՝ ներառյալ մարդկային ռեսուրսների մասնագիտական մակարդակի ապահովումը, ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխումը և գերատեսչությունների միջև պատշաճ փոխգործելիությունը, որպեսզի խորհրդի գործունեությունն ունենա երկարաժամկետ ու կայուն ազդեցություն:

Բացի այդ, խորհրդի արդյունավետ գործունեության արդյունքում հնարավոր է դառնում խորացնել միջազգային համագործակցությունը՝ ներգրավելով միջազգային լավագույն փորձը և տեխնոլոգիական նորարարությունները: Հատկապես պետք է նշել, որ միջազգային կառույցների և առաջատար տեխնոլոգիական ընկերությունների ներգրավումը կարող է արագացնել հայաստանյան թվային միջավայրի զարգացումն ու նպաստել պրակտիկայում կիրառվող լուծումների որակական մակարդակի բարձրացմանը: Սա թույլ կտա նաև ապահովել Հայաստանի մրցունակությունն ավելի լայն տարածաշրջանային և գլոբալ թվային շուկաներում: Մշտադիտարկելով և գնահատելով իրականացվող ծրագրերի արդյունավետությունը և դրանց

համապատասխանությունը Հայաստանի ռազմավարական նպատակներին՝ խորհրդի աշխատանքները հնարավորություն են ստեղծում ապահովելու Հայաստանում թվային փոխակերպման գործընթացների արդյունավետ կազմակերպումը: Այս խորհրդի գործունեության արդյունավետությունը կարող է դառնալ լուրջ նախապայման պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և նորարարական քաղաքականությունների ներդրման համատեքստում:

2022 թվականի ապրիլի 11-ին, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/169 հ որոշմամբ, հիմնադրվել է «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամը, որի առաքելությունը Հայաստանի թվային փոխակերպման խթանումն է: Գործակալության առաքելությունը համահունչ է ժամանակակից աշխարհում պետական կառավարման և տնտեսական զարգացման միտումներին, որտեղ թվային փոխակերպումը դիտարկվում է որպես կենսական կարևորություն ունեցող գործոն: Թվային լուծումների ներդրման և դրանց լայնածավալ օգտագործման ապահովմամբ, գործակալությունը նպատակ ունի նպաստելու հետևյալ ուղղություններով¹.

✓ քաղաքացիների կենսագործունեությունը ապահովող ծառայությունների հարմարավետության և հասանելիության բարձրացում, որը ենթադրում է հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության և մատչելիության բարելավում՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաներ;

✓ քաղաքացիների ներուժի զարգացում՝ ուղղված սեփական բարեկեցությանը: Գործակալությունը նախատեսում է աջակցել բնակչության թվային հմտությունների և գիտելիքների զարգացմանը, որը կնպաստի նրանց սոցիալական և տնտեսական ակտիվության բարձրացմանը:

✓ Ձեռնարկությունների մրցունակության բարձրացում: Թվային լուծումների միջոցով նպատակ է դրված բարելավելու բիզնես միջավայրը, խթանելու նորարարությունները և աջակցելու ձեռնարկություններին արդյունավետության և արտադրողականության աճի գործում:

✓ Հանրային ինստիտուտների արդյունավետ կառավարման ապահովում: Գործակալությունը միտված է պետական կառավարման համակարգում թվային տեխնոլոգիաների ինտեգրմանը, որը կհանգեցնի կառավարման գործընթացների թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը:

Հիմնադրամի ստեղծումը ենթադրում է նոր ինստիտուցիոնալ մոդելի կիրառություն, որտեղ կենտրոնական բանկը ներգրավվում է ոչ միայն ֆինանսական կանոնակարգման, այլ նաև երկրի թվային զարգացման խթանման գործում: Սա կարող է դիտարկվել որպես նախադեպ տարածաշրջանում, որտեղ կենտրոնական բանկը ստանձնում է տեխնոլոգիական և ինովացիոն օրակարգի համադրման կարևոր դերակատարում: Միևնույն ժամանակ, հարկավոր է մշտապես հավասարակշռել թվային նորարարության խթանումը և անձնական տվյալների պաշտպանության ու տեղեկատվական անվտանգության ապահովման պահանջները, դրանք կենսական նշանակություն ունեն ինչպես հանրային վստահության պահպանման, այնպես էլ կայուն թվային տնտեսության զարգացման համար: Ընդհանուր առմամբ, Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հաջող գործունեությունը կարող է դառնալ հիմնաքար՝ Հայաստանի պետական կառավարման և տնտեսության թվային փոխակերպման համար: Սակայն, այդ հաջողությունը պահանջում է հեռանկարային ռազմավարությունների մշակում, բավարար ֆինանսավորում, շարունակական վերապատրաստում և տարբեր շահակիցների միջև ինստիտուցիոնալ համագործակցություն:

¹ Հայաստանի տեղեկատվական համակարգեր գործակալության պաշտոնական կայք՝ <https://isaa.am/>

2021 թվականից Հայաստանում գործարկվել է հանրային ծառայությունների «Թվայնացման ուղեցույց» կայքը¹: Այս նախաձեռնության հիմնական բաղադրիչը «Թվայնացման սկզբունքներ» բաժինն է, որտեղ ներկայացված են հանրային ծառայությունների թվայնացման 14 հիմնարար սկզբունքներ: Ուղեցույցը մանրամասն նկարագրում է թվայնացման թիմերի ձևավորման, օգտատիրոջ կարիքների բացահայտման, բիզնես մոդելի մշակման և ճանապարհային քարտեզի կազմման, ինչպես նաև թվային ծառայության գործարկման և հետագա բարելավման չափորոշիչները: Սկզբունքների ներդրումը իրականացվում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի և «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի համագործակցությամբ: Այս ինստիտուցիոնալ համագործակցությունը նպատակ ունի ապահովելու թվայնացման գործընթացների արդյունավետությունը և կայունությունը: «Թվայնացման ուղեցույց» կայքի գործարկումը կարևոր քայլ է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների թվային փոխակերպման գործընթացում: Այն տրամադրում է համակարգված մոտեցում և գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս պետական մարմիններին և թվայնացման թիմերին արդյունավետորեն իրականացնելու ծառայությունների թվայնացումը՝ հիմնվելով լավագույն միջազգային փորձի և ստանդարտների վրա: 14 սկզբունքների սահմանումը և դրանց ինտեգրումը պրակտիկ գործընթացներում ապահովում է, որ թվային ծառայությունները լինեն արդյունավետ և մատչելի: Սրա միջոցով հնարավոր է բարձրացնել քաղաքացիների բավարարվածության մակարդակը և պետական կառավարման համակարգի արդյունավետությունը:

«Թվայնացման ուղեցույցը» կարող է դիտարկվել որպես համակարգված ինստիտուցիոնալ մոտեցման օրինակ, որը հիմնված է հանրային կառավարման և օգտատիրոջ վրա կենտրոնացված (user-centered) սկզբունքների ձևավորման վրա: Ըստ տարբեր ուսումնասիրությունների (OECD, UN E-Government Surveys)² թվային ծառայությունների մշակումը պետք է առաջնորդվի նախևառաջ օգտատիրոջ կարիքների ու սպասումների վերլուծությամբ: Այստեղից բխում է, որ ուղեցույցում ներառված սկզբունքները կարող են նպաստել քաղաքացիների և բիզնեսների իրական պահանջներին ավելի ճշգրիտ արձագանքելուն:

Բացի այդ, նման ուղեցույցների մշակումն ու կիրառումը խթանում է անընդհատ բարելավման և ճկուն նախագծման սկզբունքների ներդրումը պետական կառավարման ոլորտում: Ներդրված չափորոշիչները, պահանջներն ու ուղենիշները հնարավորություն են տալիս թվայնացման թիմերին ավելի օպերատիվ կերպով ստանալու արձագանքներ շահակիցներից, գնահատելու ծառայության որակը և անհրաժեշտության դեպքում արագորեն կատարելու անհրաժեշտ շտկումներ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հանրային ծառայությունների թվայնացման առանցքային մարտահրավերներից են տվյալների փոխգործելիությունը, օգտատերերի թվային գրագիտության մակարդակը և վստահությունը նորարարական տեխնոլոգիաների նկատմամբ: Ուղեցույցի կիրառումն ու 14 սկզբունքների ինտեգրումը գործնականում կարող են զգալիորեն նպաստել այդ մարտահրավերների հաղթահարմանը, եթե դրանք զուգորդվեն լայնածավալ իրազեկման և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև անվտանգության և գաղտնիության ապահովման քաղաքականությունների հետ:

Հայաստանում «Թվայնացման ուղեցույցը» կարելի է համեմատել Եստոնիայում կիրառվող e-Estonia-ի, Մեծ Բրիտանիայի Government Digital Service-ի կամ Սինգապուրի GovTech-ի ներկայացրած մոտեցումների հետ, որտեղ նույնպես հատուկ չափանիշներ են սահմանվում ծառայությունների նախագծման ու իրականացման

¹ Ծառայությունների թվայնացման ուղեցույցի պաշտոնական կայք՝ <https://standards.hightech.gov.am/>

համար: Միջազգային այս գործունակ փորձերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատելու, թե ինչպիսի տեղայնացման լրացուցիչ քայլեր են անհրաժեշտ հայաստանյան միջավայրում հաշվի առնելով սոցիալ-տնտեսական, մշակութային ու տեխնոլոգիական յուրահատկությունները:

Հայաստանում թվայնացման և թվային փոխակերպման կազմակերպական մեխանիզմների կատարելագործման մասով հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում Եվրամիությունն իր «EU4Digital» նախաձեռնությամբ, որը ԵՄ-ի գլխավոր տարածաշրջանային ծրագիրն է՝ ուղղված աջակցելու Արևելյան գործընկերության երկրների թվային փոխակերպմանը և թվային շուկաների ներդրակեցմանը¹: «EU4Digital» նախաձեռնության շրջանակում կենտրոնական նշանակություն ունի ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «EU4Digital» ծրագրի II փուլը (2022-2025), որը հիմնված է դրա առաջին փուլի (2019-2022) ձեռքբերումների վրա: Ծրագիրը կենտրոնանում է Արևելյան գործընկերության երկրների տնտեսության և կառավարման ամրապնդման վրա՝ հիմնական թեմատիկ ոլորտների թվային փոխակերպման միջոցով.

- ✓ հեռահաղորդակցության կանոններ.
- ✓ էլեկտրոնային վստահության և միջսահմանային թվային ծառայություններ.
- ✓ էլեկտրոնային առևտուր.
- ✓ էլեկտրոնային առողջապահություն.
- ✓ ՏՀՏ նորարարություններ և ստարտափ Էկոհամակարգեր.
- ✓ թվային հմտություններ²:

«EU4Digital» նախաձեռնության ներքո ֆինանսավորվում է չորս նախագիծ. «EU4Digital» ծրագիր, EU4Digital Broadband, EU4Digital Cyber և EaPConnect: Նշվածներից բացի, Եվրոպական միությունն աջակցում է նաև մի շարք այլ նախագծերի, որոնք նպաստում են թվային տնտեսությանը և հասարակությանն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ երկկողմանի (երկրների միջև) մակարդակներում³:

«EU4Digital» նախաձեռնությունը կարող է նպաստել Հայաստանում թվային տնտեսության զարգացմանը՝ խթանելով նոր աշխատատեղերի ստեղծումն ու տնտեսական աճի տեմպերը: Հատկանշական է, որ նախաձեռնության շրջանակներում աջակցություն է տրամադրվում նաև Հայաստանի օրենսդրության և կարգավորումների ներդաշնակեցմանը ԵՄ ստանդարտներին, որը նպաստում է միջազգային համագործակցությանը: Նախաձեռնության միջոցով Հայաստանը կարող է օգտվել ԵՄ-ի փորձից, ստանալ ֆինանսական և տեխնիկական աջակցություն, բարձրացնել տնտեսության մրցունակությունը և բարելավել հանրային ծառայությունները: Սակայն, ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, ներդաշնակեցնել ԵՄ չափորոշիչները Հայաստանի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին:

«EU4Digital» նախաձեռնությունը արտացոլում է ծրագիր-քաղաքականություն-գործնականություն կապը, որտեղ ԵՄ-ի և Հայաստանի շահերը հատվում են թվային զարգացման օրակարգում: «EU4Digital»-ի երկարաժամկետ հաջողությունը կախված է ոչ միայն ֆինանսական միջոցների և խորհրդատվական աջակցության տրամադրումից, այլ նաև Հայաստանի պետական կառավարման համակարգի

¹ «EU4Digital» նախաձեռնության պաշտոնական կայք՝ <https://eufordigital.eu/hy/> (մուտք՝ 05.12.2024 թ.)

² «EU4Digital» նախաձեռնության պաշտոնական կայք՝ <https://eufordigital.eu/hy/discover-eu/the-eu4digital-initiative/> (մուտք՝ 05.12.2024 թ.)

³ «EU4Digital» նախաձեռնության պաշտոնական կայք՝ <https://eufordigital.eu/hy/other-projects/> (մուտք՝ 05.12.2024 թ.)

կարողությունից՝ գործնականում ներդնելու և կառավարման գործընթացներին հարմարեցնելու ԵՄ չափորոշիչները:

2021 թվականի փետրվարի 11-ին ընդունվել է «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» N 183-Լ ՀՀ Կառավարության որոշումը, որի հիմնական նպատակ է սահմանվել ապահովել կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը, մասնավորապես ուղղված լինելով՝

1. արդյունավետ, արագ, թափանցիկ և տվյալահեն պետական կառավարմանը: Մասնավորապես՝ պետական կառավարման թվային տեխնոլոգիաների ներդրման շրջանակներում նախատեսվում է թվայնացման ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակման և հիշողության ձևավորման միջոցով համակարգել ՀՀ պետական կառավարման համակարգում թվայնացման համակարգերը և գործիքները՝ հիմնվելով թվայնացման ստանդարտների ստեղծման և ներդրման, անվտանգության չափանիշների ներդրման, միասնական հենքի կիրառման վրա:

2. թվային հարթակների ու խելացի լուծումների միջոցով տնտեսության մասնավոր հատվածի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը: Տնտեսության մասնավոր հատվածի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել տվյալների քաղաքականության մշակում, տվյալների ենթակառուցվածքների զարգացում և կիբեռանվտանգության ազգային կենտրոնի միջոցով թվային անվտանգ միջավայրի ապահովում:

3. թվային հմտություններին տիրապետող՝ ապագայի տնտեսությանը պատրաստ, աշխատուժի ձևավորմանը, և թվային լուծումների լայն կիրառմանը հանրության կողմից: Հանրությանը թվային տնտեսության զարգացումներին հնարավորինս արագ ինտեգրելու նպատակով հասարակության տարբեր շերտերի համար կիրականացվեն թվային կարողությունների զարգացմանն ուղղված կրթական ծրագրեր՝ արդյունքում նպաստելով նաև պետական էլեկտրոնային ծառայությունների օգտագործելիության աստիճանի բարձրացմանը (ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-Լ «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» որոշում):

Հատկանշական է, որ Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ բավական հավակնոտ նպատակներ են սահմանվել: Մի կողմից, իհարկե, պետական կառավարման տվյալահեն մոտեցումը կարող է նպաստել որոշումների ընդունման գործընթացի օբյեկտիվության բարձրացմանը և ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմանը: Բացի այդ, պետական կառավարման գործընթացների թափանցիկությունը կարող է բարձրացնել հանրության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ և նվազեցնել կոռուպցիայի ռիսկերը: Մյուս կողմից, ակնհայտ է, որ այս ամենի ներդրման և իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան կարողություններ ու հմտություններ ունեցող մասնագետներ, որոնց պակասը կարող է բավական դանդաղեցնել թվային փոխակերպման գործընթացները: Բացի այդ, շարունակում է մեծ բացթողում մնալ պետական կառավարման մարմինների թվային ենթակառուցվածքների բաշխման անհամաչափությունը, որը բարդ է դարձնում միասնական մոտեցման կիրառումը թվային փոխակերպման ապահովման գործընթացներում:

Բացի այդ, Հայաստանի թվայնացման ռազմավարության կյանքի կոչման պարագայում բավական սուր է դառնալու նաև հատկապես պետական կառավարման թվային հարթակներում կիբեռհարձակումների ռիսկերը, որոնք կարող են ժամանակակից թվային պատերազմների գործիքներ դառնալ՝ պետական գաղտնիք պարունակող տվյալների հասանելիության հաշվին: Այս առումով, առանցքային նշանակություն են ստանում կիբեռանվտանգության ազգային կենտրոնի ստեղծում

ու դրա արդյունավետ գործունեության ապահովումը՝ արտաքին ու ներքին մարտահրավերներն ու ռիսկերը կանխարգելելու տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ սահմանված նպատակները համահունչ են ժամանակակից աշխարհի պահանջներին և երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման անհրաժեշտություններին: Ռազմավարությունը ընդգրկում է պետական կառավարման, մասնավոր հատվածի և հանրության թվային փոխակերպման հիմնական ուղղությունները: Այնուամենայնիվ, ծրագրերի արդյունավետ իրականացման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է ապահովել համապատասխան ֆինանսավորում և ռեսուրսներ: Մյուս կողմից, ռազմավարությամբ սահմանված միջոցառումների ծրագրերի, նպատակային և արդյունքային ցուցանիշների հասնելու համար հատկապես մեծ նշանակություն ունի միջգերատեսչական համագործակցության խթանումն ու հանրության ներգրավվածության բարձրացումը: Այս առումով, ռազմավարության հաջող իրականացման գրավականը կարող է դառնալ միայն համապարփակ մոտեցումը, որը կապահովի պետական մարմինների, մասնավոր հատվածի, կրթական հաստատությունների և հանրության ջանքերի մեկտեղում:

Եզրակացություններ

Այսպիսով, վերջին տարիներին պետական կառավարման համակարգի արդիականացման և հասարակության կյանքի որակի բարելավման համատեքստում Հայաստանում թվայնացման և թվային փոխակերպման գործընթացները մեծ նշանակություն են ստացել, որոնց ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը ձևավորվել են պետական նախաձեռնությունների, օրենսդրական բարեփոխումների և միջազգային համագործակցության միջոցով: Ընդհանուր առմամբ, Հայաստանում թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը գտնվում են ակտիվ զարգացման փուլում: Կառավարության կողմից ընդունված ռազմավարությունն ու ծրագրերը սահմանել են թվայնացման հիմնական ուղղությունները և նպատակները, որոնք միտված են ապահովելու պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը, տնտեսության արդիականացումը և հանրային ծառայությունների մատչելիության բարձրացումը: Բացի այդ, տարիների ընթացքում բավական կատարելագործվել է նաև ոլորտը կարգավորող օրենսդրական միջավայրը, որով սահմանվել են տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, փոխգործելիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը: Այսպես՝ մշակվել և ներդրվել են զգալի թվով էլեկտրոնային հարթակներ (www.e-gov.am, «Mulberry» և այլն), որոնք պարզեցնում են հանրային ծառայությունների մատուցումը: Կառավարությունը, միջազգային կառույցներն ու մասնավոր հատվածը պարբերաբար ներդնում են ռեսուրսներ՝ օրենսդրական, կազմակերպական և տեխնոլոգիական բարեփոխումների համար: Եզակի նախադեպ է կենտրոնական բանկի ներգրավումը «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի ստեղծման միջոցով, որը բացում է նոր հնարավորություններ ներդաշնակ և հեռանկարային թվայնացման քաղաքականության համար: Այս ամենից ելնելով՝ կարելի է պնդել, որ Հայաստանում թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը ձևավորված են, սակայն կարիք ունեն ավելի համակարգված և համակողմանի զարգացման:

Այդուհանդերձ, կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են նաև մի շարք մարտահրավերներ, որոնք կարող են էապես սահմանափակել պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման արդյունավետությունը: Այսպես՝ շարունակում է օրակարգային մնալ օրենսդրական և իրավական դաշտի

անկատարությունը: Մյուս կողմից, թվային փոխակերպումը պահանջում է լայնածավալ և շարունակական վերապատրաստումներ, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավում: Հատկապես մարզերում այս մասով առկա են եական բացեր, որոնք դանդաղեցնում են թվայնացման ծրագրերի ամբողջական ներդրումը: Հատկանշական է նաև, որ թվային լուծումների ներդրման արդյունավետությունը չի կարող լիարժեք դրսևորվել, եթե հասարակության լայն շերտերը չունեն համապատասխան թվային հմտություններ և բավարար մոտիվացիա առցանց ծառայություններից օգտվելու համար, որն էլ ընդգծում է կրթական, իրազեկման և պետական-մասնավոր համագործակցության ծրագրերի կարևորությունը:

Այսպիսով, Հայաստանի պետական կառավարման համակարգում թվայնացման գործիքակազմի ներդրումը լիովին համահունչ է համաշխարհային զարգացման միտումներին: Սակայն առաջընթացը պահպանելու և առավելագույն արդյունքի հասնելու համար հարկավոր է իրականացնել թիրախային, երկարաժամկետ և ինստիտուցիոնալ մակարդակով համակարգված ջանքեր: Այդ պարագայում թվային փոխակերպումը կդառնա այն շարժիչ ուժը, որը կապահովի պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը, երկրի տնտեսական աճը և հանրային ծառայությունների որակի եական բարելավումը:

ՕԳՏԱԳՈՐԾԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան, Ժաննա, Թվային հասարակության տեսական հիմքերը և զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում. *Գիտական Արցախ*, № 4(15), 2022, էջ 104, doi:10.52063/25792652-2022.4.15-104:

2. Խաչատրյան, Կառլեն. Թվայնացումը որպես պետության կայացածության բաղադրիչ. *Գիտական Արցախ*, № 3(10), 2021, էջ 265-275, doi:10.52063/25792652-2021.3-265:

3. Խաչատրյան, Կառլեն. Պետական կառավարման համակարգի թվայնացման հիմնահարցերը ՀՀ-ում. *Բանբեր Երևանի համալսարանի, տնտեսագիտական հանդես*, 2023. N 1(40), էջ 72-87, <https://doi.org/10.46991/BYSU:G/2023.14.1.072>:

4. Մելքոնյան, Վիկտորյա. Տեղեկատվական հասարակության փոխակերպման հիմնախնդիրները Հայաստանում. *Բանբեր Երևանի պետական համալսարան*, № 2(13), 2022, էջ 112, doi:10.52063/25792652-2022.2.13-112:

5. Մաթևոսյան, Դիանա. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը և արտաքին առևտրի հետ փոխկախվածության դրույթները. *Գիտական Արցախ*, № 1(16), 2023, էջ 184, doi:10.52063/25792652-2023.1.16-184:

6. Մինասյան, Աննա, Շահբազյան, Լիանա, Սանամյան, Աննա. Թվային տնտեսության զարգացման խնդիրներն ու հեռանկարները ՀՀ-ում. *Բանբեր ՀՀՏՀ*, 2022.3, էջ 180:

7. ՀՀ Կառավարություն. N692 որոշում. 15 նոյեմբեր 1999. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=35082>, վերջին մուտք՝ 11.11.2024թ.:

8. ՀՀ Կառավարություն. N 14 արձանագրային որոշում. 10 Ապրիլ 2014. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/14-44_1ardz.pdf, վերջին մուտք՝ 11.11.2024թ.:

9. ՀՀ Կառավարություն. N1093-Ն որոշում. 31 Օգոստոս 2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152169>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:

10. ՀՀ Կառավարություն. N1849-Ն որոշում. 19 Նոյեմբեր 2019. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137681>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:

11. ՀՀ Կառավարություն. N 183-Լ. 11 Փետրվար 2021. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:

12. ՀՀ Կառավարություն. N 926-Ն որոշում. 3 Օգոստոս 2022. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115232>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:
13. ՀՀ Վարչապետ. N 624 որոշում. 7 Հոկտեմբեր 1999. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128501>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:
14. ՀՀ վարչապետ. N 81-Ա որոշում. 21 Հունվար 2022. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182631>, վերջին մուտք՝ 15.11.2024թ.:
15. Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի պաշտոնական կայքը՝ <https://www.ekeng.am/hy/>, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
16. ՀՀ Էլեկտրոնային կառավարում՝ <https://www.e-gov.am/>, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
17. ՀՀ Կադաստրի կոմիտեի Էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ՝ <https://www.e-cadastre.am/>, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
18. ՀՀ պետական վճարումների Էլեկտրոնային համակարգի պաշտոնական կայք՝ <https://www.e-payments.am/hy/>, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
19. ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էլեկտրոնային համակարգի պաշտոնական կայք՝ www.e-register.am, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
20. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հաշվետվությունների ներկայացման Էլեկտրոնային համակարգ՝ <https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf>, վերջին մուտք՝ 24.11.2024թ.:
21. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ՝ <https://e-request.am/hy/>, վերջին մուտք՝ 26.11.2024թ.:
22. Զառարկայի տրամադրության ոլորտի թվային ծառայությունների հարթակ՝ www.e-permits.am, վերջին մուտք՝ 26.11.2024թ.:
23. Լիցենզիաների միասնական Էլեկտրոնային գրանցամատյան՝ www.e-license.am, վերջին մուտք՝ 26.11.2024թ.:
24. ՀՀ արդարադատության նախարարության մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ՝ <http://e-rights.am/>, վերջին մուտք՝ 26.11.2024թ.:
25. «EU4Digital» նախաձեռնության պաշտոնական կայք՝ <https://eufordigital.eu/hy/>, վերջին մուտք՝ 26.11.2024թ.:
26. Nyman-Metcalf, Katrin. "How to Build E-Governance in a Digital Society: The Case of Estonia." *Revista Catalana de Dret Public*, vol. 58, 2019, pp. 1–12.
27. Saarenpää, Ahti. "A Legal Framework for E-Government." *Lecture Notes in Computer Science*, vol. 2739, 2003, pp. 377–384.
28. Sarantis, Demetrios. "Modernization of Greek Public Sector: Results from eGovernment Law Application and Next Steps." *Proceedings of the European Conference on E-Government (ECEG)*, vol. F1294, 2017, pp. 179–187.
29. Albrecht, Valerie, and Novak, Anna-Sophie. "Analyzing the Implementation of Electronic Communication Strategies Through Legislation." *13th IFIP WG 8.5 International Conference on Electronic Participation (EPart 2021)*, Lecture Notes in Computer Science, vol. 12849, 2021, pp. 198–209.
30. OECD. Recommendation of the Council on Digital Government Strategies. *OECD Publishing*, Paris, 2014, p. 6.
31. United Nations. United Nations E-Government Survey 2018. *UN Publishing Section*, New York, 2018, pp. 193–194.
32. United Nations. United Nations E-Government Survey 2014: E-Government for the Future We Want. *UN Publishing Section*, New York, 2014, p. 196.

WORKS CITED

1. E'lektronayin kar'avarman ent'akar'ucvac'qneri nerdrman grasenyaki pashtonakan kayq` <https://www.ekeng.am/hy/> (verjin mutq` 24.11.2024t'.) [Official website of the Office for the Implementation of E-Governance Infrastructures: <https://www.ekeng.am/hy/>] (Accessed 24 November 2024). (In Armenian)
2. E'lektronayin harcuneri miasnakan hart'ak` <https://e-request.am/hy> (verjin mutq` 26.11.2024t'.) [Unified Platform for Electronic Inquiries: <https://e-request.am/hy>] (Accessed 26 November 2024). (In Armenian)
3. «EU4Digital» naxad'er'nut'yan pashtonakan kayq` <https://eufordigital.eu/hy/> (verjin mutq` 26.11.2024t'.) [Official Website of the "EU4Digital" Initiative: <https://eufordigital.eu/hy/>] (Accessed 26 November 2024). (In Armenian)
4. Harut'yunyan, Jhanna. «T'vayin hasarakut'yan tesakan himqery' ev zargacumy' chorrord ardyunaberakan heghap'oxut'yan hamateqstum». [Theoretical Foundations and Development of the Digital Society in the Context of the Fourth Industrial Revolution], Gitakan Arcax, № 4(15), 2022, e'j 104, doi:10.52063/25792652-2022.4.15-104. (In Armenian)
5. HH ardaradatut'yan naxararut'yan iravabanakan and'anc petakan r'egistri e'lektronayin hamakargi pashtonakan kayq` [www.e-register.am](http://www.e-register.am) (verjin mutq` 24.11.2024t'.) [Official Website of the State Registry of Legal Entities of the Ministry of Justice of Armenia: www.e-register.am] (Accessed 24 November 2024). (In Armenian)
6. HH ardaradatut'yan naxararut'yan mardu iravunqneri azgayin r'azmavarut'yan hart'ak` <http://e-rights.am/> (verjin mutq` 26.11.2024t'.) [National Human Rights Strategy Platform of the Ministry of Justice of Armenia: <http://e-rights.am/>] (Accessed 26 November 2024). (In Armenian)
7. HH e'lektronayin kar'avarum` <https://www.e-gov.am/> (verjin mutq` 24.11.2024t'.) [E-Government of Armenia: <https://www.e-gov.am/>] (Accessed 24 November 2024). (In Armenian)
8. HH kadastri komitei e'lektronayin c'ar'ayut'yunneri matucman hart'ak` <https://www.e-cadastre.am/> (verjin mutq` 24.11.2024t'.) [Electronic Services Platform of the Cadastre Committee of Armenia: <https://www.e-cadastre.am/>] (Accessed 24 November 2024). (In Armenian)
9. HH Kar'avarut'yun. N692 voroshum. 15 noyember 1999. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=35082> (verjin mutq` 11.11.2024t'.) [Government of the Republic of Armenia. N692 Decision. 15 November 1999. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=35082>] (Accessed 11 November 2024). (In Armenian)
10. HH Kar'avarut'yun. N 14 ard'anagrayin voroshum. 10 April 2014. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/14-44_1ardz.pdf (verjin mutq` 11.11.2024t'.) [Government of the Republic of Armenia. Protocol Decision N14. 10 April 2014. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/14-44_1ardz.pdf] (Accessed 11 November 2024). (In Armenian)
11. HH Kar'avarut'yun. N1093-N voroshum. 31 O'gostos 2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152169> (verjin mutq` 15.11.2024t'.) [Government of the Republic of Armenia. Decision N1093-N. 31 August 2015. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152169>] (Accessed 15 November 2024). (In Armenian)
12. HH Kar'avarut'yun. N1849-N voroshum. 19 Noyember 2019. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137681> (verjin mutq` 15.11.2024t'.) [Government of the Republic of Armenia. Decision N1849-N. 19 November 2019. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137681>] (Accessed 15 November 2024). (In Armenian)

13. HH Kar'avarut'yun. N 183-L. 11 P'etrvar 2021.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957> (verjin mutq` 15.11.2024t'.)
 [Government of the Republic of Armenia. Decision N183-L. 11 February 2021.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957>] (Accessed 15 November 2024). (In Armenian)
14. HH Kar'avarut'yun. N 926-N voroshum. 3 O'gostos 2022.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115232> (verjin mutq` 15.11.2024t'.)
 [Government of the Republic of Armenia. Decision N926-N. 3 August 2022.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115232>] (Accessed 15 November 2024). (In Armenian)
15. HH petakan vtwarumneri e'lektronayin hamakargi pashtonakan kayq`
<https://www.e-payments.am/hy/> (verjin mutq` 24.11.2024t'.) [Official Website of Armenia's State Payment System: <https://www.e-payments.am/hy/>] (Accessed 24 November 2024). (In Armenian)
16. HH petakan ekamutneri komitei hashvetvut'yunneri nerkayacman e'lektronayin hamakarg`
<https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf> (verjin mutq` 24.11.2024t'.)
 [Online Reporting System of the State Revenue Committee of Armenia: <https://file-online.taxservice.am/pages/loginPage.jsf>] (Accessed 24 November 2024). (In Armenian)
17. HH Varchapet. N 624 voroshum. 7 Hoktember 1999.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128501> (verjin mutq` 15.11.2024t'.)
 [Prime Minister of the Republic of Armenia. Decision N624. 7 October 1999.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128501>] (Accessed 15 November 2024). (In Armenian)
18. HH Varchapet. N 81-A voroshum. 21 Hunvar 2022.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182631> (verjin mutq` 15.11.2024t'.)
 [Prime Minister of the Republic of Armenia. Decision N81-A. 21 January 2022.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=182631>] (Accessed 15 November 2024). (In Armenian)
19. Khachatryan, Karlen. «T'vaynasman vorpes petut'yan kayacvacut'yan bacardich» [Digitalization as a Component of State Maturity]. Gitakan Arcax, № 3(10), 2021, e'j 265–275, doi:10.52063/25792652-2021.3-265. (In Armenian)
20. Khachatryan, Karlen. «Petakan karavarman hamakargi t'vaynasman himnaharcer@ HH-um» [Key Issues of the Digitalization of the Public Administration System in the Republic of Armenia]. Banber Yerevani Hamalsarani. Tntesagitutyun Gitakan Handes, № 1(40), 2023, e'j 72–87, <https://doi.org/10.46991/BYSU:G/2023.14.1.072>. (In Armenian)
21. Licenzianeri miasnakan e'lektronayin grancamatyan` [www.e-license.am](http://www.e-license.am) (verjin mutq` 26.11.2024t'.) [Unified Electronic Register of Licenses: www.e-license.am] (Accessed 26 November 2024). (In Armenian)
22. Mat'evosyan, Diana. «HH makrotntesakan cucanishneri dinamikayi verluc'ut'yuny' ev artaqin ar'evtri het p'oxkaxvac'ut'yan druyt'nery'». [Analysis of the Dynamics of Armenia's Macroeconomic Indicators and Provisions of Interdependence with Foreign Trade]. Gitakan Arcax, № 1(16), 2023, e'j 184, doi:10.52063/25792652-2023.1.16-184. (In Armenian)
23. Melqonyan, Viktorya. «Teghekatvakan hasarakut'yan p'oxakerpman himnaxndirneri' Hayastanum». [Challenges of Transformation of the Information Society in Armenia]. Gitakan Arcax, № 2(13), 2022, e'j 112, doi:10.52063/25792652-2022.2.13-112. (In Armenian)

24. Minasyan, Anna, Shahbazyan, Liana, Sanamyan, Anna. «T'vayin tntesut'yan zargacman xndirner n u her'ankarnery' HH-um». [Challenges and Perspectives of Digital Economy Development in Armenia]. Banber HPTH, 2022.3, e'j 180 (In Armenian)
25. Qaghaqashinut'yan volorti t'vayin c'ar'ayut'yunneri hart'ak` [www.e-permits.am](http://www.e-permits.am) (verjin mutq` 26.11.2024t'.) [Digital Services Platform for Urban Development: www.e-permits.am] (Accessed 26 November 2024). (In Armenian)

INSTITUTIONAL AND ORGANIZATIONAL FOUNDATIONS OF DIGITALIZATION AND DIGITAL TRANSFORMATION IN THE PUBLIC ADMINISTRATION SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

NAREK MELKUMYAN

*Armenian State University of Economics, Faculty of Management,
Management Chair, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

This article presents the key institutional and organizational provisions and mechanisms of digitization and digital transformation in the public administration system of the Republic of Armenia. The main purpose of the article is to study and analyze the legal mechanisms regulating digitization processes, as well as their organizational forms and impact on increasing the efficiency of Armenia's public administration system, ensuring the accessibility of public services, and promoting economic development.

To achieve this goal, the article examines the current state and main trends of digitization in the Armenian public administration system, taking into account the legal and organizational foundations. In addition, it evaluates the effectiveness of the digital tools used within public administration, identifies possible issues, and outlines solutions.

For a comprehensive understanding of the problem, the article applies comparative and structural analysis methods, including the examination of legal and programmatic documents, as well as the evaluation of completed initiatives.

The findings indicate that digitization and digital transformation processes are actively evolving in Armenia and have gained significant importance in recent years, contributing to the modernization of the public administration system and improving the quality of life. The institutional and organizational foundations of these processes have been established through state programs, legal reforms, and international cooperation. Notably, the strategic programs and initiatives adopted by the Government of the Republic of Armenia have outlined the main directions of digitization in the public administration system and improved the legal framework in this field.

Nonetheless, targeted actions must continue, focusing on raising the digital literacy of the population, strengthening interdepartmental cooperation, ensuring active public engagement, and developing a robust cybersecurity system.

Keywords: *digitalization, digital transformation, public administration, e-governance, digital skills, cybersecurity, information systems, institutional development, international cooperation, public services.*

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННЫЕ ОСНОВЫ ЦИФРОВИЗАЦИИ И ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАРЕК МЕЛКУМЯН

*аспирант кафедры менеджмента факультет менеджмента
Армянского государственного экономического университета,
г. Ереван, Республика Армения*

Данная статья посвящена ключевым институциональным и организационным положениям и механизмам цифровизации и цифровой трансформации в системе государственного управления Республики Армения. Основная цель статьи – исследовать и проанализировать правовые механизмы регулирования процессов цифровизации, а также их организационные формы и влияние на повышение эффективности системы государственного управления Армении, обеспечение доступности публичных услуг и развитие экономики.

В рамках поставленной цели в статье рассматривается текущее состояние процесса цифровизации в системе государственного управления РА, его основные тенденции с учётом правовых и организационных основ. Кроме того, дана оценка эффективности инструментов цифровизации, применяемых в системе государственного управления, выявлены возможные проблемы и намечены пути их решения.

Для всестороннего изучения проблемы в статье использованы методы сравнительного и структурного анализа, в том числе, анализ правовых и программных документов, а также оценка уже осуществлённых инициатив.

Результаты проведённого исследования показывают, что в Армении активно развиваются процессы цифровизации и цифровой трансформации, которые в последние годы приобрели особую значимость, способствуя модернизации системы государственного управления и повышению качества жизни населения. Институциональные и организационные основы этих процессов были созданы благодаря государственным программам, правовым реформам и международному сотрудничеству. Важную роль играют стратегические программы и инициативы, принятые Правительством Республики Армения, которые определили основные направления цифровизации в системе государственного управления и усовершенствовали правовое регулирование в этой сфере.

Вместе с тем необходима дальнейшая реализация целевых мероприятий, направленных на повышение цифровой грамотности населения, укрепление межведомственного сотрудничества, обеспечение активного общественного участия и развитие системы кибербезопасности.

Ключевые слова: *цифровизация, цифровая трансформация, государственное управление, электронное управление, цифровые навыки, кибербезопасность, информационные системы, институциональное развитие, международное сотрудничество, государственные услуги.*